

Հանայն օժման աղօթքները կ'ընէ, առանց զանոնք մեռնով օծելու. վասն զի Հայոց քով սովորական իւր երբեք չ'օրհնուիր:

Արագ քահանայութեան կը տրուի օժմամբ մեռնիւ. այս խորհուրդն ընդունողն յաճախ իւր մկրտութեան անունը մկրտութեան կնքաչօր բաղձանաց համեմատ կը փոխէ, եւ իւր կնքաչօր մկրտութեան անունը կ'առնու:

Հայք քաւարանի գոյութեան չեն հաւատար, ներողութիւն չեն ընդունիր, բայց ննջեցելոց պատարագ եւ աղօթքներ կը մատուցանեն ի քաւութիւն մեղաց ննջեցելոց:

Գարձեալ մեծ տօներն որթողոքս եկեղեցւոյ հետ կը տօնեն, ի բաց առեալ զայն՝ որ իրենք Ծնունդն, Յայտնութիւնն ու Մկրտութիւնն Յունուար 6ին միեւնոյն օրը կը տօնեն, Ս. Աստուածնի Վերափոխումն, որ թէ՛ որթողոքս եւ թէ՛ հոռմէական եկեղեցւոյ մէջ Օգոստ. 15ին կը տօնուի, սովորաբար Օգոստոսի 12 եւ 18ին մէջ հանդիպող կիրակին կը տօնեն¹³:

Հայք, շատ հին հեթանոսական սովորութեան մը համեմատ, ինչ ինչ տօներուն եղջերաւոր արջառ ու ոչխար (свинья) կը մորթեն եւ միսն աղքատաց կը բաշխեն: Այս սովորութիւնը Հայոց ի քրիստոնէութիւն դարձէն յառաջ Անահիտ¹⁴ դից մատուցուած զոհ մըն էր, որ եւ ի քրիստոնէութիւն անցնելով՝ քահանայիցմէ կը պահպանուի, որոնք զոհեալ կենդանւոյն իւրն ու մորթը կ'ընդունին: Այս մատաղը գնելու համար հաւատացելոց մէջ դրամաժողով կ'ըլլայ: